ՄԵԾ ՄՏԱԾՈՂԸ

Ղ. Բ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

(Վ. Գ. Բելինսկու ծննդյան 150-ամյակի առթիվ)

Հայտնի է, որ XIX դարը Ռուսաստանի պատմության մեջ նշանակալից է մեծ տեղաշարժերով։ Լենինը նշել է, որ այդ դարը բնորոշվում է երեք փուլերով, որոնք կապվում են ռուսական իրականության երեք դասակարգերի հետ։ Առաջին շրջանը (1825—1861) հիմնականում կապվում է ազնվականության հետ, երկրորդ շրջանը՝ (1861—1895) ռազնոչին կամ բուրժուա-դեմոկրատական խավերի հետ, երրորդը՝ (1895-ից) պրոլետարիատի հետ։ Լենինը նկատել է, որ առաջին շրջանում բողոքում էր ազնվականության շնչին փոքրամասնությունը, որը կապված չէր աշխատավոր մասսաների հետ և այդ պատճառով էլ հնի դեմ իր բնդվզումների մեջ անզոր էր, սակայն այդ բողոքող ազնվականության միջից դուրս եկած լավագույն մարդիկ՝ դեկաբրիստները օգնեցին արթնացնելու ժողովրդին։ Գերցենը խանդավառությամբ նկատել է, որ դեկաբրիստները «...դրլխից մինչև ոտները պողպատից ձուլված դյուցազուններ էին, ռազմիկներ, որոնք գիտակցաբար գնում էին դեպի հաստատ կործանում, որպեսզի արթնացնեն երիտասարդ սերնդին նոր կյանքի համար։ Դա, Գերցենի դիպուկ արտահայտությամբ, «կրակոց էր իրավարդիշերում»։ XIX դարն սկսվում է, իրոք, ամենածանր ռեակցիայով։ Նիկոլայ I-ը մոլեգնում էր՝ հանդես գալով դահճի դերում։

Դարաշրջանի պաշտոնական գաղափարախոսությունը ինքնակալությունն ու ուղղափառությունն էին։ Այն ամենը, ինչ դրանից դուրս էր դաժանորեն հետապնդվում էր։ Բնորոշ մի փաստ. այդ շրջանի լուսավորության մինիստր Ուվարովը իր կրեդոն ձևակերպել է այսպես. «Եթե ինձ հաջողվի Ռուսաստանը 30 տարով ետ տանել նրանից, ինչ նրան պատրաստում է թեորիան՝ կկատարեի պարտքս և կմեռնեի հանգիստ»։ Պաշտոնական գաղափարախոսության մեխը դա ստատուս քվոն էր։ Ոչ մի փոփոխություն եղած դրության մեջ—այս էր տիրապետող շրջանների սկզբունքը։ Սակայն որքան հասարակական կյանքը ծանր ու ճնշող էր, այնքան էլ բարձրացող դիմադրությունը օրըստօրե ուժեղանում էր։ Բնորոշելով այն թարմ վիթխարի ուժը, որ կապվում էր ռուս ժողովրդի ռևոլյուցիոն բայլերի և ջանքերի հետ, Լենինը գրել է. «Մեխանիկայի օրենքն ասում է, թե գործողությունը հավասար է հակագործողությանը։ Պատմության մեջ, ռևոլյուցիայի խորտակիչ ուժն էլ պակաս չափով կախված չէ այն բանից, թե ինչքան հզոր և տևական է եղել ազատության ձգտման ճնշումը, թե ինչքան խորն է հակասությունն անդրջրհեղեղյան «վերնաշենքի» և ժամանակակից դարաշրջանի կենդանի ուժերի միջև»։

Գրական ձևի մեջ ժամանակի ոգին արտահայտվել է այսպես. «Որտեղ է այն մարդը, որ ռուսական հոգու հարազատ լեզվով կարողանար մեզ ասել ամենահզոր բառը՝ «հառաջ»։ Այդ բառը ամենավառ և կրակոտ ձևով ասացին ռևոլյուցիոն-դեմոկրատները՝ Բելինսկին, Գերցենը, Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը։ Սակայն Ռուսաստանում այդ դարում դեպի առաջ շարժվելը կապվում էր, և չէր կարող չկապվել, վիթխարի արգելքների, ծանր զոհողությունների հետ։ Պայքարը պահանջում էր կամքի, մտքի մեծագույն լարում։ Ժողովրդին ճորտատիրական կապանքներից դուրս բերելու պահանջը կառավարող շրջանների կողմից դիտվում էր որպես սրբապղծություն, օրըստօրե հրամայական պահանջ էր դառնում կյանքի առաջընթացն արգելակող հին, փտած հարաբերությունների ոչնչացումը։ Առանց մեծ գործերի, մեծ զոհերի, վիթխարի անձնուրաց ջանքերի, որոնումների՝ հնարավոր չէր դեպի նոր բնագծեր շարժվելը։ Կյանքի արմատական վերափոխման պահանջը խթանում էր որոնման կիրքը, գիտական թեորիա մշակելու ձգտումը։ Հիմնական խնդիրը

Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 9, էջ 56—57։

դիրն էր. դուրս բերել ռուս ժողովրդին պատմության մեծ ճանապարհի վրա, վերակառուցել հասարակարգն այնպես, որ համապատասխաններ ժողովրդի դեմքին և ձգտումներին։ Նշանակալից և բնորոշ է այն, որ ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատներն անհուն սիրով և հավատով լիր լցված ժողովրդի պատմական մեծ դերի նկատմամբ։ Այստեղ էր նրանց անկոտրում կամքի և ուժի ակունքը։ Թեորիայի բնագավառում եռանդագին որոնումների նպատակն էր հասու լինել ճշմարտություն, գտնել երջանիկ կյանքի կառուցման ուղիները և եղանակները։ Այդ ձգտումից բխում էր այն, որ թեորիան, փիլիսոփայությունը երկնային ոլորտներից պետք է իջներ երկրի վրա, թեորիան պետք է լիներ բովանդակալից, սոցիալապես հագեցված, ունենար ուղղվածություն։ Ռուսական ծանր իրականության մեջ Բելինսկին էր, որ արտահայտեց այն միտքը, թե ռուսական հոգին տոչորվում է կյանքի, գործելու ծարավից։ Մեծ մտածողը հանգեց այն վճռական մտքին, որ թեորիան լուրջ բան կդառնա միայն այն ժամանակ, երբ հանդես կգա «ռեալիզմի» դերով։

Թեորիայի հետ Բելինսկին կապում էր «գործել, գործելը» սկզբունքը։ Պետք էր կոտրել թեորիայի պալատական ոգին, ինքն իր մեջ ընկղմվելու, իր ներքին հարստությամբ տարվելու, կյանքի թոհուբոհից հեռու կանգնելու սովորությունը։ Թեորիայի, փիլիսոփայության խնդիրն ամենից առաջ այն է, որ թափանցի երևույթների էականի մեջ, վեր հանի ու բացատրի այրող հարցերն և պրոբլեմները։ Նա իր մեջ պետք է ներծծի կյանքի ամբողջ շունչը, այլապես հնարավոր չի լինի կյանքի վերակառուցումը նոր հիմքերի վրա։ Ճորտատիրական կարգերի քայքայումը, ճորտ գյուղացիների չդադարող ընդվզումները, ակներև էին դարձնում անցման անհրաժեշտությունը։ Անցումները միշտ էլ կապվել և կապվում են ուժերի մեծ լարումների, կրքոտ որոնումների հետ։ Այդպիսի բեկումնալից, լարված ժամանակներում սովորաբար գործիչների, մտածողների երկու տիպեր են հրապարակ իջնում. Դուրկու արտահայտությամբ, «մեկն իր մեջ ամբողջովին մարմնավորում է ամենայն մեռնողը, իր դարն անցածը... մյուս տիպը ապրում է բացառապես ապագայի ձգտումով, բոլորովին հեռու հնից և թշնամի նրան — դա մեզ համար Բելինսկին է, Դոբրոլյուբովը, Չերնիշևսկինը»։

* *

Դաժան հնի դեմ պայքարը Ռուսաստանում շատ վաղ ժամանակներից է սկսվել։ Պայքարի քուրայում Ռուսաստանում XVIII դարից սկսած թեորիական լուրջ խթաններ են ստեղծվել։ Լոմոնոսովի և Ռադիշչևի ջանքերով մատերիալիստական ուղղության սկիզբը դրվեց։ Այդ առթիվ լենին նշել է, որ Ռուսաստանի հասարակական առաջավոր մտքի երկու հիմնական ուղղությունները բարերախտաբար ունեցել են լուրջ մատերիալիստական տրադիցիա։ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի թեորիական որոնումների ճանապարհին առաջին մեծ բարձրությունը Հեգելն է եղել։ Հայտնի է, որ Հեգելի փիլիսոփայությունը ոչ միայն Ռուսաստանի, այլև Եվրոպայի շատ առաջավոր, մտավոր մեծ ուժի տեր մարդկանց մագնիսի պես իրեն է ձգել և մինչև որոշ ժամանակ գերել։ Պատահական չէ, որ այնպիսի մեծ հանճարներ, ինչպիսիք էին Մարքսն ու Էնգելսը կարողացան հեգելյան սահմաններ պատռել, դուրս գալ մոտավորապես անցյալ դարի բառասունական թվականների կեսերից։ Չերնիշևսկին շոշափելով Հեգելի ազդեցության հարցը Բելինսկու վրա նկատել է, որ վերջինս թեև կատարյալ հանճար էր, բայց մի որոշ ժամանակ Հեգելը նրան այնպես էր գերել, որ աշխարհը նա հայում էր հեգելյան տեսանկյունով։ Չերնիշևսկին շեշտել է այն բնորոշ մոմենտը, որ Բելինսկու խառնվածքի մեծ ուժը, մինչև անգամ Հեգելով հրապուրման ժամանակն էլ, ուզում էր դուրս պոռթկալ այդ սահմաններից։

Հեգելի ուսմունքի մեջ Բելինսկուն հրապուրում, գրավում էին հիանալի հարցադրումները, մաքի խիզախումները, մտքի լայնությունն ու խորությունը, հատկապես դիալեկտիկական մեթոդը։

Չերնիշևսկին շոշափելով Հեգելի փիլիսոփայության գերող նշանակությունը, նկատել է, որ այդ փիլիսոփայությունը որոնող մտքերի առջև մի տեսակ բաց էր անում դեպի ճշմարտությունը տանող դուռը, կոչ անելով՝ «որոնեցեք ճշմարտությունը, որովհետև բարիքը նրա մեջ է։ Ճշմարտությունն ինչպիսին էլ լինի, այնուամենայնիվ նա լավ է այն բանից, ինչ ճշմարիտ չէ։ Մտածողի առաջին պարտականությունն է՝ ոչ մի հետևանքի առաջ կանգ չառնել։ Նա պետք է պատրաստ լինի զոհաբերելու ճշմարտության իր ամենասիրելի կարծիքները. մոլորությունն ամեն մի կորստանման աղբյուրն է. ճշմարտությունը բարձրագույն բարիք է և ամեն մի այլ բարիքի աղբյուրը»[1]։

---

[1] Н. Г. Чернышевский. Избранные философские сочинения. Москва. 1938, էջ 432։

Սակայն այն մտածողները, մեծ գործիչները, որոնք ձգտում էին թեորիան, փիլիսոփայությունը լծակ դարձնել իրականության վերափոխման, հին տապալելու, նորը ստեղծելու ուղղությամբ, դուրս էին գալիս Հեգելով հրապուրվելու կախարդական շրջադծից և սկսում էին բնական հաւացքով դիտել այդ մեծ մտածողի ուսմունքը։ Հեգելի ուսմունքի մեջ տեսնում էին չափավորություն, հնի հետ հաշտվելու, կյանքի իրական ճշմարտությունները թեանցելու ընդհանուր միտում, Չերնիշևսկին դիպուկ նկատել է, որ Հեգելին հաղթահարելու համար անհրաժեշտ էր լինել հեգելական։ Հեգելի պահպանողականությունն ըստ էության արտահայտվում է, Չերնիշևսկու խոսքերով ասած, այն բանում, որ բացակայում է իրերի տվյալ վիճակը փոխելու կամեցողություն։ Իսկ ոուս ռևոլյուցիոն-դեմոկրատների համար հենց այդ էր էականը։ Որոշ շրջանից հետո (1830-ական թվականների վերջերից), Չերնիշևսկու արտահայտությամբ, պետերբուրգյան «բավարանից» սկսած, իրականությունը խթանեց Բելինսկուն վերանայելու իր գաղափարական պաշարը։ Չերնիշևսկին նկատել է, որ հենց այդ «բավարանումն» էլ սկիզբ դրվեց գլխավոր ստուգմանը, տեղի ունեցավ հեգելյան դրույթների, սկզբունքների զտումը միակողմանիությունից։

Բելինսկու համար հիմնականն ու էականը իրականության արմատական փոփոխությունն էր։ Այս ոգով յուրացնելով Հեգելի դիալեկտիկան նա ռեալ և որոշակի իմաստ տվեց դիալեկտիկական բացատրանը։ Նա դժգոհ էր Հեգելից առանձնապես այն բանի համար, որ նրա մոտ բացատրման բացառումը չէր շոշափում բուն իրերի աշխարհը։ Բոտկինին գրած իր մի նամակում Բելինսկին նկատել է, որ Հեգելը «...Կյանքի երևույթները դարձրել է ստվերներ, որոնք կմախքային ձևերով իրար փարված՝ պարում են ոգում, գերեզմանատան վրա...»[1]։

Դիալեկտիկական բացատրումն իմաստ և նշանակություն ձեռք կրերի միայն այն ժամանակ, երբ հետևողականորեն գործադրվի հին մարմնացնող ուժերի դեմ։ Առանց ռեալ բացատրման հին, իր դարն անցածը այնքան կուռ ձանա և ափերից դուրս կգա, որ կառաջանա լճացում, կյանքը ֆվերածվի մի գարշահոտ ճահճի։ Բելինսկին անհատների մեծությունը տեսնում էր բացատրման ուժի մեջ։ Նա նկատել է, որ պատմության հերոսները հանդիսանում են հին բանդողները։ Որպես այդպիսի փաստի օրինակ նշում է Լյութերին, Վոլտերին, Ենցիկլոպեդիստներին, յակոբիններին և այլն։ Այնուհետև նա իր ստեղծագործական մտքի մեջ հասել է այն կետին, որ բացատրումը գիտել է որպես կապի մոմենտ։ Նա խիստ բննադատում է նիհիլիստական վերաբերմունքը պատմության նկատմամբ։ Առանց նախորդ սերունդների ճիգերի ոչ մի մեծ բան պատմության մեջ չի ստեղծվում։ Խոշոր իրադարձությունները ենթադրում են օբյեկտիվ պայմաններ, նախադրյալներ։ Նա գրել է. «Ո՞ր որ ինքն իրեն ոչ մեծ բան է անում, ոչ փոքր, այլ նայելով իր շուրջը՝ ամեն մեկն սկսում է կամ շարունակել, կամ բացասել իրենից առաջ արվածը. սա պատմական զարգացման օրենքն է»։ Մեծ անհատները չեն հորինում, նրանք իրենց ստեղծագործական ավյունը բաղում են իրական պայմաններից։ Որպես այս դրույթի հաստատման օրինակ Բելինսկին վերցնում է Լյութերին։ Հարցը դրվում է այսպես. ինչումն է նրա մեծությունը։ Դրան մեծ մտածողը պատասխանում է այսպես. «Լյութերը կարող էր լինել և կարող էր չլինել։ Լյութերի գոյությունը զուտ պատահականություն է, որովհետև նա կարող էր ծնվել, կարող էր և չծնվել, կարող էր բնությունից չստանալ հանճարեղ ոգի, ինչպես և ստանալ այն։ Լյութերը նշանակալից դեր է կատարել հենց նրա համար, որ նրա մեջ մեծ ուժով և լիարժեքությամբ իրեն զգացնել է տվել ժամանակի ոգին։ Լյութերին շարժում էր ժամանակի ոգին։ «Իսկ պարագաները, որոնք ժամանակի ոգու արդյունք էին, նրան մատնացույց էին անում ուղին և միջոցները»[2]։

Նախադրյալների, պարագաների վճռող ուժը շեշտելու համար Բելինսկին նկատում է, որ եթե Լյութերը մեկ դար հետո ծնվեր, ոչ որ չէր իմանա նրա անունը։ Մեծ մարդը գործ չի հնարում, այլ գտնում է իրեն ժամանակի մեջ։

Բելինսկին ըստ էության հերքում էր Թ. Կարլայլի շատ տարածված, իդեալիստների կողմից ճանաչված հիմնական այն դրույթը, թե «Հերոսն իր ժամանակի արդյունքը չէ»։ Այսպես, օրինակ, եթե Թ. Կարլայլը պատմական որևէ ժամանակի հետ կապում էր մեծ տեղաշարժերի փաստը, ապա դա նա կենտրոնացնում, խտացնում էր մի որևէ անձնավորության մեջ։

Մինչմարքսյան փիլիսոփայության մեջ Բելինսկին այն ամենանշանավոր մտածողներից մեկն էր, որ փորձեց որոշել անհատի մեծության նշանները։ Մեծ անհատները նրանք են, որոնք սկիզբ են դնում։ Հենց սկիզբ դնողներն են, որ մնում են անմահ։ Սկիզբ դնող հանճարները մարմնավորում, դրսևորում են մարդկային ոգու ուժը։ Մեծ անհատը այն ժամանակ է մեծ դառնում,

---

[1] Վ. Գ. Բ ե լ ի ն ս կ ի. Փիլիսոփայական ընտիր երկեր, Երևան, 1954, հատ. 1, էջ 341։

[2] Նույն տեղում, էջ 503—504։

[3] Նույն տեղում, էջ 242։

ները դրսևորելով ժողովրդի ոգին, ձգտում է վերացնել «մարդկության և ժողովուրդների ընթացքը դժվարացնող խոչընդոտները»։ Այդ պատճառով էլ հանճարը, բոլոր բնագավառներում էլ, «կարծես թե իր ժամանակակից մարդկության կամ թե իր ժողովրդի գիտակցության ֆոկուսն է»։ Հին իր տեղը կամավոր չի դիջում նորին։ Նորը միշտ էլ կապվում է ժողովրդի անվան և դերի հետ։ Չի եղել և չի կարող լինել պատմության մեջ այնպիսի իրադրություն, որ իսկական նորը չհամապատասխաներ աշխատավոր մարդկության շահերին։ Պրոգրեսի տեսանկյունը Բելինսկու համար գա հոծ մասսաների, աշխատավոր մարդկության շահերն են։ Այն, ինչ դեմ ընթաց է մարդկության շահերին՝ պետք է մերժվի և հաղթահարվի։

Այսպիսի գիծը բնորոշ է եղել ռևոլյուցիոն-դեմոկրատների համար։ Ժողովրդից են սկսել բոլոր ազնիվ հումանիստ մեծ մտածողները։ Հայտնի է, որ Մարքսի և Էնգելսի հայացքների էվոլյուցիայի մեջ այս մոմենտը նույնպես կարևոր դեր է կատարել։ Նրանք աստիճանաբար սկսեցին հասկանալ, որ ափերի մեջ չտեղավորվող հեգելյան փիլիսոփայությունը և իրականությունը անչափ իրարից հեռու են. Հեգելի երկնային սնունդը բոլորովին պիտանի չէ երկրում ապրողների համար։ Հայնեի մի արտահայտությամբ, կուսակ են խոստանում երկնքում, բայց ծիտը չեն դնում մարդկանց բուի մեջ։ Ժողովրդի շահերի պաշտպանության կիրքը, մեծ ձգտումը ոչ միայն հրում է մարդուն դեպի պրակտիկ ակտիվ գործողությունները, այլև երևույթների գիտական բացատրության պահանջն է ստեղծում։

Բելինսկին համառ և հետևողականորեն պայքարել է վոլյունտարիզմի դեմ։ Վոլյունտարիստի համար մարդկային կյանքը մի կատարյալ քաոս է, որտեղ ինչ-որ երկնային անհատներ կանթեղները ձեռքներին այս ու այն կողմ թափառում են և ինչ-որ լուսավոր հետքեր են թողնում...

Անհատը կամեցավ՝ այս ինչ բանը եղավ, անհատը ընկավ՝ ամեն ինչ մարեց... Մարդու կամքը օժտվում է ինչ-որ գերբնական զորությամբ։ Կյանքի բոլոր կարգի տեղաշարժերն ու փոփոխությունները կապվում են մեծ անհատների սոսկ մտահղացումների հետ և բոլորովին անտեսվում են օբյեկտիվ պայմանները, ռեալ հնարավորությունները, պարագաները։ Սուր քննադատելով վոլյունտարիստների հայացքները Բելինսկին գրել է. «Փոփոխությունների և բարելավումների անհրաժեշտությունը պետք է մատնացույց անեն բուն պարագաները, և պարագաների օգնությամբ էլ պետք է կատարվեն այդ փոփոխություններն ու բարելավումները»։

1841—1842 թթ. սկսած Բելինսկին կրակոտ ձևով քննադատում է իդեալիզմը, հեգելյան վերամբարձ միստիցիզմը։ Բելինսկուն նվիրված գրականության մեջ շեշտվում է այն փաստը, որ նա ծանոթ է եղել „Deutsch-Franzosische Jahrbucher"-ին («Գերմանա-ֆրանսիական տարեցույց»), որի մեջ եղել են Մարքսի հոդվածները՝ «Հրեական հարցի շուրջը», «Հեգելյան իրավունքի փիլիսոփայության քննադատության շուրջը» և Էնգելսի «Քաղաքատնտեսության քննադատության ուրվագծեր» հոդվածը։ Այս ազդեցությունը հեշտացրեց Հեգելի փիլիսոփայության իդեալիստական էության մեջ թափանցելը. Հեգելի փիլիսոփայության մեջ Բելինսկին տեսնում էր քողարկված, պճնազարդված ֆատալիզմ, որը կաշկանդում, կծկում էր հոգու թռիչքը, ավելորդ էր դարձնում համարձակ, խիզախ գործողությունները, թուլացնում ակտիվությունը։ Բելինսկին հակվեց այն տեսակետին, որ զարգացումը չունի վերջ, մինչդեռ Հեգելի փիլիսոփայությունը թույլ է տալիս ենթադրելու, որ բացարձակ իդեան մի ինչ-որ աստիճանի վրա կանգ է առնում և սառում ու դրանով էլ վերջ է տրվում ամեն մի զարգացմանը։ Նա շեշտել է, որ ո՛չ բնության և ո՛չ էլ մարդկային կյանքում զարգացումը կանգ չի առնի, երբեք մարդկությունն «իրեն չի ասի՝ կանգ առ, բավական է, այլևս առաջ գնալու տեղ չկա»։ Հեգելի մոտ կյանքի երևույթները դառնում են սոսկ բացարձակ իդեայի ինչ-որ անկատար դրսևորումներ։ Այս տեսակետից բնորոշ է առանձնապես Հեգելի պատմության փիլիսոփայությունը, որի մեջ իրական կյանքը մարում է, այլևս ոչ մի իրական կայծ, լույս... լույսը «գրսից» է մտցվում հասարակական կյանքը, այդ «դուրսը»՝ դա հենց բացարձակ իդեան է։ Լինելով մատերիալիստ Բելինսկին գտնում էր, որ «մարդու հոգևոր բնությունը չպետք է անջատել նրա ֆիզիկական բնությունից, որպես ինչ-որ առանձնահատուկ և նրանից անկախ բան, բայց պետք է տարբերել նրանից, ինչպես անատոմիայի բնագավառը տարբերում են ֆիզիոլոգիայի բնագավառից։ Մտքի օրենքները պետք է դիտվեն մտքի գործողությունների մեջ. դա տրամաբանության գործն է, մի գիտություն, որն անմիջականորեն հաջորդում է ֆիզիոլոգիային, ինչպես ֆիզիոլոգիան հաջորդում է անատոմիային»[3]։ Զարգացման իդեան Հեգելի մոտ դուրս է իրերի աշխարհից. Բելինսկին պահանջում էր, որ զար-

---

[1] Վ. Գ. Բելինսկի, Փիլիսոփայական ընտիր երկեր, հատ. 1, էջ 22։.
[2] Նույն տեղում, էջ 41։
[3] Նույն տեղում, էջ 39։

հացման իդեան դործադրվի բուն իսկ իրականության մեջ, ռեալ իրերի և երևույթների աշխարհում։ Զարգացման իդեայի հետ սերտորեն կապվում է պատմականության սկզբունքը։

Բելինսկին գտնում էր, որ պատմականության սկզբունքը պետք է գործադրել ամենուրեք։ Այդ սկզբունքով մոտենալով ռուսական իրականությանը, մեծ գործիչն ու մտածողը գտնում էր, որ ռուսական ճորտատիրական կարգը անախրոնիզմ է հիշեցնում։ Կյանքի, հասարակության իսկական ադը՝ աշխատավոր մարդը գրաստի գերումն է հանգես դալիս՝ ամենուրեք լլկվում է և հարստահարվում։

Ռևոլյուցիոն պաթոսի բարձրագույն կետն իր արտահայտությունը գտավ Գոգոլին գրած նամակում (1847)։ Լենինը գրել է. «Մեր ազատագրական շարժման մեջ ազնվականներին ռազնոչինեցների կողմից լիովին գուրս մղելու նախորդը դեռևս ճորտատիրական իրավունքի օրով Վ. Գ. Բելինսկին էր։ Նրա հռչակավոր «Նամակ Գոգոլին», որ հանրագումարի էր բերում Բելինսկու կրթական գործունեությունը, անցնենգուրային դեմոկրատական մամուլի այն լավագույն երկերից մեկն է եղել, որոնք մինչև օրս էլ պահպանել են իրենց հսկայական, կենդանի նշանակությունը»[1]։

Այդ նամակի մեջ ամբողջ վեհությամբ ցուցադրվեց խոշոր մտածողի հոգեկան և մտավոր աշխարհը։ Նրա նպատակների նպատակը ռուս մեծ ժողովրդի ազատագրումն էր։ Նրա հանճարեղ գրչի բոլոր արտահայտությունների մեջ երևում էր անխախտ հավատը ժողովրդի մեծ գործի նկատմամբ։

Քաղաքական ծրագիրն էր՝ խորտակել ճորտատիրական իրավունքը։

Իրականության զգաստ ուսումնասիրությունը օգնեց Բելինսկուն թափանցել հասարակական կյանքի որոշ հակասական կողմերի մեջ։ Նա, ճիշտ է, չկարողացավ բարձրանալ մինչև պատմական մատերիալիզմի աստիճանը, չկարողացավ հասկանալ հասարակական կյանքի շարժիչ ուժերը, չհասկացավ արտադրության եղանակի դերը հասարակական ֆորմացիաների փոփոխության մեջ, սակայն առանձին հարցերում ցուցադրում էր մտքի մեծ փայլ և խորություն։ Այսպես, օրինակ, շոշափելով ռուսական հասարակության հետ կապված որոշ հակասությունները, որոնք դժվարացնում և խճճում են բարեփոխությունների գործը՝ նշում էր, որ ռուսական հասարակության մեջ անջատման ոգին կապվում է տարբեր շրջանների, դասերի իրական դրության հետ։ Նա նկատել է, որ յուրաքանչյուր դաս յուր առանձնահատուկը, սեփականն ունի՝ թե՛ հագուստը, թե՛ սովորությունները և թե՛ անգամ լեզուն... մեծ է անջատումը, որն իշխում է... միևնույն հասարակության տարբեր դասակարգերի ներկայացուցիչների միջև։

* * *

Բելինսկին իր քաղաքական համոզմունքը, փիլիսոփայական գաղափարները զարգացրել է գրականության և ընդհանրապես արվեստի հարցերում։ Այս բնագավառում նա նոր և նշանակալից խոսք է ասել։ Հայտնի է, որ իդեալիզմի ամենահուսալի բնագավառը դա արվեստի աշխարհն է եղել։ Բելինսկին մեծ թափով և եռանդով գրոհում է այդ «անմատչելի» բերդի վրա։ Իդեալիստական ընդհանուր ճանաչված, քարացած դրույթներից մեկն այն է, որ արվեստը դուրս է ճշմարտության սահմաններից։ Արվեստը իբր թե շեմքից մերժում է հետազոտության, ստուգման ոգին։ Իդեալիստական հայացքը արվեստի հարցերում կտրուկ մերժում է նրա իմացական նշանակությունը. արվեստի մանվածքը իբր թե բնազդն է կամ էլ՝ անգիտակցականը։ Արվեստի դերը իդեալիստները համարում են այն, որ նա օգնում է մարդուն կտրվել, վերանալ ռեալ աշխարհից։ Այս բնույթով արվեստը մոտեցնում են երազին, կրոնին և այլն։ Երազն ու արվեստը մարդուն տանում են դեպի այնկողմային, անուրջների աշխարհը։ Իդեալիստ արվեստագետները հատկապես պնդել են և շարունակում են պնդել, որ արվեստը ոչ մի գործ չունի ռեալ կյանքի, օբյեկտիվ ճշմարտության հետ։ Արվեստի թեորետիկներից մեկն ուղղակի պնդել է, թե էսթետիկայի ամեն մի սիստեմը, որը հավակնում է հենվել օբյեկտիվ ճշմարտության վրա, ակներևորեն այնքան անմիտ է, որ նույնիսկ անարժան է դառնում քննության համար։ Ըստ իդեալիստների, պոետը, վիպասանը և արվեստի այլ ձևերի ներկայացուցիչները մի տիրապետող ձգտում ունեն՝ առարկան ներկայացնել հրապուրիչ ձևով։ Ունենալով այսպիսի նպատակ արվեստի մարդը միջոցների մեջ չպետք է խտրություն դնի. չպետք է խուսափի ոչ մի գունավորումից։ «Հավերժական գեղեցիկը» — ահա արվեստագետի բնագիծը, իսկ «հավերժական գեղեցկի» բնագիծը ոչ մի ընդհանուր բան չունի օբյեկտիվ ճշմարտության հետ։

Բելինսկին հիանալի կերպով ցույց է տալիս իդեալիստական միրաժի բացասական նշանակությունը։ Նա հարուստ փաստարկներով հիմնավորում է այն դրույթը, որ ճշմարտության որոնման պահանջը իսկական արվեստի նշան է։ Հասարակության գիտակցության բոլոր ձևերը, դրանց

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 298։

թվում նաև արվեստը, լույս աշխարհ են եկել հենց ճշմարտությունը որոնելու և գտնելու ճանապարհի վրա։ Բելինսկին հարցը դնում է այսպես. վայելելը քիչ է, վայելումն առանց իմացության չի կարող բավարարել մարդուն։ Նա գրել է. «Ավելի հաճելի պատկեր չի կարող լինել, քան այն, որ մեզ մոտ գիտությունը մոտենում է կյանքին ու հասարակություններին»։

Ոչ միայն գիտությունը, այլև արվեստը պետք է թափանցի իրականության խորքերը և տոգորվի ժամանակի այրող հարցերի լուծման նպատակադրումով։ Արվեստը ոչ միայն պետք է արտացոլի տվյալ իրականությունը, դարաշրջանը, այլև այնպիսի գործուն ձևով արտացոլի, որ արվեստի գործերը լիովին տոգորվեն այժմեականությամբ։ Պրոգրեսիվ, ճշմարիտ արվեստի դերն այն է, որ կյանքին հզոր մղում տա, այսինքն ակտիվորեն միջամտի կյանքին և օգնի հնի, վատի տապալմանը և նորի, լավի ստեղծմանը։ Բելինսկին հստակապես շեշտել է այն միտքը, թե գեղարվեստական երկը նրա համար չէ, որ պասսիվորեն պատկերի կյանքը, հաշտվելով ստատուս-քվոյի հետ, այլ նրա նպատակն է պատկերել կյանքը կապված հզոր մղումների հետ։ Գեղարվեստական գործը նույնպես ժողովուրդներին, մասսաներին պետք է արթնացնի լավ գործերի համար, արդասավոր գործողությունների համար։

Նա գրել է. գեղարվեստական երկը մեռած է «եթե նա պատկերում է կյանքը լոկ նրա համար, որ պատկերի կյանքը առանց դարաշրջանի գերիշխող մտքի մեջ իր սկիզբն ունեցող որևէ սուբյեկտիվ, հզոր մղումի, եթե նա տառապանքի ողբ չէ կամ հիացմունքի ներբող, եթե նա հարց չէ կամ հարցի պատասխան»[1]։ Բանաստեղծին, գրողին, նկարչին անհարիր է իդեալիստների պահանջը — «թռչունի երգու իսկական արվեստագետը չի կարող «թռչուն» լինել, որովհետև նա ամենից առաջ քաղաքացի է, իր հասարակության և դարաշրջանի գավակը։ Գրողը, եթե իրոք գրող է, չի կարող չյուրացնել իր ժամանակի խթանող իդեաները, չի կարող իր ձգտումները չձուլել ժողովրդի բարձր ձգտումների հետ։

Այն հարցին, թե որ գրողն է մոռացվում, մեծ մտածողը պատասխանում է. մինչև անգամ տաղանդ ունենալու դեպքումն էլ մոռացվում է նա, ով հոգեհարազատորեն կապված չէ իր դարաշրջանի հետ։ Այն գրողներն են մոռացվում, որոնք «ոչ հայացք ունեն կյանքի վրա, ոչ հոգու ու սրտի հավատը կազմող սենսական համոզմունքներ, ոչ դոկտրին, ոչ էլ սկզբունքներ»։ «Թռչունների պես երգելը», այսինքն երգել սոսկ երգելու համար՝ արվեստի բուն խնդիրը չէ։ Այդպիսի պահանջը բխում է արվեստը արվեստի համար սկզբունքից։ Այս տեսակետից հետևում է, որ արվեստը մի տեսակ պատրաստ ձևերի մեջ երկնային հեռուներից է իջնում երկրի վրա։ Նման տեսակետ պաշտպանողները պնդում են, որ ստեղծագործության ազատությունը անհամատեղելի է օբյեկտիվ ճշմարտության, սոցիալական լիարժեքության պահանջի հետ։ Նրանք գտնում են, որ արվեստի ակունքը սուբյեկտն է, ուստի և արվեստը չի կարող սուբյեկտիվ չլինել։ Բելինսկին մեծ սրությամբ և հարուստ փաստարկներով քննադատում է այս տեսակետը՝ ցույց տալով նման հայացքի անզորությունը։ Ռգեալիստ գեղագետները առանձնապես ճգնում են ցույց տալ, որ հասարակական շահերի պաշտպանության, այժմեականության պահանջը ոչ մի կերպ չի համատեղվում ստեղծագործության ազատության հետ։ Բելինսկին հիանալի կերպով ապացուցում է, որ ստեղծագործության ազատությունը շատ լավ համաձայնվում է այժմեականությանը ծառայելու հետ։

Արվեստի բուն խնդիրը իրականության վերարտադրությունն է, վերարտադրությունն ակտիվ նպատակասլաց ոգով։

Արվեստի հարցերին նվիրված մեծ մտածողի ու գործչի բոլոր գործերն ու հոդվածները ունեն փիլիսոփայական խոր տոգորվածություն։ Այն է, շատ լայն է մտածողի հորիզոնը, շատ խորն են հոգու դրսևորումները, ջերմ, անթառամ սիրով է լցված դեպի ժողովուրդը, այրվում է նրա հոգսերով, բերկրում է կոահելով ռուս մեծ ժողովրդի ապագան...

Լենինը ջերմությամբ շեշտել է ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների ժառանգության կարևոր նշանակությունը ապագա սերունդների համար։

Բելինսկին պատկանում է այնպիսի մեծ մտածողների, գործիչների թվին, որոնց մտքի և հոգու նորարարական ուժն ու հմայքը ոչ միայն չեն թուլանում, խունանում ժամանակի ընթացքում, այլև մեծ տեղաշարժերի լույսի տակ ավելի հոյակապ ու գրավիչ են դառնում։ Լավ է ասել Գերցենը. «Այս ամոթխած մարդու մեջ, այս տկար մարմնում մի հուժկու, գլադիատորական բնություն էր ապրում։ Այո, դա ուժեղ մարտիկ էր»[4]։

---

[1] Վ. Գ. Բելինսկի, Փիլիսոփայական ընտիր երկեր, հատ. 1, էջ 443։
[2] Նույն տեղում, էջ 442։
[3] Նույն տեղում, էջ 432։
[4] Ա. Ի. Գերցեն, Փիլիսոփայական ընտիր երկեր, Երևան, 1950, հատ. 2, էջ 234։